

3727



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան



«01» 04 2025 թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 084 - 25

Նախաձեռնող՝

«Գ.Վ.Հ. ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ

Կոպայքի մարզ, Կամարիս 7 փ., պ. 48

Գործունեությունը՝

Գյամրեզի անդեզիտաբազալտների հանքավայրի  
արդյունահանում

Կոպայքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 084 - 25

«01» ապրիլի 2025 թ.

«Գ.Վ.Հ. մայնինգ» ՍՊԸ-ի կողմից Կոտայքի մարզի Գյամրեզի  
անդեզիտաբազալտների հանքավայրում արդյունահանման  
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման  
հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Գ.Վ.Հ. մայնինգ» ՍՊԸ
Փաստաթղթերի փաթեթ՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակ Գտնվելու վայրը՝	«Ա» կատեգորիա Կոտայքի մարզ, Աբովյան համայնք Կամարիս բնակավայր

**Ներածական մաս.** «Գ.Վ.Հ. մայնինգ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է Կոտայքի մարզի Գյամրեզի անդեզիտաբազալտների հանքավայրում (այսուհետ՝ հանքավայր) իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «թ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ է:

Հանքավայրի տարածքը զբաղեցնում է 7,72 հա մակերես: Ըստ հաշվետվությունում նշված տեղեկատվության՝ հայցվող տարածքի հողերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ վարելահող:

**Նկարագրական մաս.** Գյամրեզի անդեզիտաբազալտների հանքավայրը գտնվում է Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Կամարիս բնակավայրի վարչական տարածքում:

Հանքավայրը հողաձածկ և ասֆալտապատ ճանապարհներով կապված է Աբովյան քաղաքի հետ:

Գյամրեզի անդեզիտաբազալտների հանքավայրի պաշարները հաստատվել են Հայկական ԽՍՀՄ մինիստրների խորհրդի երկրաբանության և ընդերքի պահպանության վարչության օգտակար հանածոների պաշարների տարածքային հանձնաժողովի կողմից 1969 թվականի հունվարի 23-ի թիվ 183 արձանագրությամբ: Համաձայն տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2024 թվականի փետրվարի 6-ի թիվ Ֆ-064/2024 տեղեկանքի՝ հանքավայրի 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ տրամադրման ենթակա ազատ մնացորդային հաշվառչային պաշարների քանակը





Բացահանքի կորդինատները ARM WGS-84 համակարգով ներկայացված են ստորև՝

Y=8475612.76	X=4455940.87	Y= 8475150.34	X=4456078.49
Y=8475160.03	X=4456066.59	Y=8475486.72	X=4456002.15
Y=8475164.74	X=4456027.14	Y= 8475440.05	X=4456000.41
Y=8475148.08	X=4455999.04	Y= 8475408.86	X=4455968.36
Y=8475264.50	X=4455858.10	Y= 8475344.51	X=4455984.81
Y=8475327.46	X=4455860.40	Y= 8475366.53	X=4456023.89
Y=8475365.85	X=4455813.87	Y=8475188.39	X=4456116.90
		Y= 8475402.87	X=4455723.36

Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կորդինատներն են՝ 40°14'12" հյուսիսային լայնության, 44°42'38" արևելյան երկայնության:

Բացահանքի պարամետրերն են՝  
օտարման մակերեսը՝ 7,72 հա,  
ամենամեծ երկարությունը՝ 429 մ,  
ամենամեծ լայնությունը՝ 303 մ,  
հանքաստիճանի բարձրությունը՝ 5 մ,  
մարված հանքաստիճանի թեքման անկյունը՝ 75°,  
օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ 1351558 մ<sup>3</sup>,  
արդյունահանվող պաշարների քանակը՝ 1176826 մ<sup>3</sup>,  
տարեկան մարվող պաշար՝ 67578 մ<sup>3</sup>,  
տարեկան արդյունահանվող պաշար՝ 58842 մ<sup>3</sup>:

«Գ. Վ. Հ. Մայնինգ» ՍՊԸ-ն նախատեսում է հանքավայրի տեղամասը մշակել միակողմանի ընդլայնական ընթացքաշերտով մշակման համակարգով, առանց հորատապայթեցման: Մակաբացման ապարները տեղափոխվելու են արտաքին լցակայան: Անդեզիտաբազալտների ծավալը հայցվող տեղամասի եզրագծում կազմում է 1351558 մ<sup>3</sup>:

Բացահանքի արևմտյան հատվածի հարևանությամբ անցնող ավտոճանապարհից դեպի բացահանքի 1565 մ բարձրության նիշը նախատեսվում է մուտքային ավտոճանապարհի անցում, որից կատարվելու է աշխատանքային հորիզոնների բացումը՝ բացող կիսախրամների անցումով, ինչպես նաև՝ ինչպես նաև՝ լցակայանային հրապարակին մոտեցող ավտոճանապարհի անցում:

Խրամների լայնությունը հիմքի մասում ընդունված է 14 մ, բարձրությունը՝ 5 մ:

Միաքարի անջատումը զանգվածից կատարվելու է հորատասեպային աշխատանքներով, որի ժամանակ նախատեսվում է սեպերի տեղադրում սեպանցքերի մեջ և հիդրավլիկ ճնշմամբ զանգվածի ճեղքում: Սեպանցքերի խորությունը միաքարի 100 սմ-ից ավելի բարձրության դեպքում ընդունվում է միաքարի բարձրության չափով: Հիդրավլիկ ճնշումը կատարվում է հիդրոսեպային կայանքի միջոցով: Միաքարի քարշումը հանքախորշերից դեպի մշակման վայրը 10-15 մ հեռավորության վրա, նախատեսվում է կատարել բուլդոզերի օգնությամբ: Բլոկների արտադրության ժամանակ առաջացած արտադրական թափոնները 156,2 մ<sup>3</sup>/հերթ ծավալով,

հանդիսանում են խճի և ավազի արտադրության հումք, որը բուլդոզերի միջոցով տեղափոխվելու և կուտակվելու է 10-15 մ հեռավորության վրա: Հատքարի բլոկների արդյունահանման ընթացքում առաջացող արտադրական թափոնները տեղափոխվելու են արտադրական հրապարակում գտնվող ՋՏ կայանք՝ խճի և ավազի ստացման համար: Դրանց պահեստավորում լցակույտերում չի նախատեսվում:

Բացահանքի լցակույտային ապարները ներկայացված են 101855 մ<sup>3</sup> ծավալի մակաբացման ապարներով, հողաբուսական շերտի ծավալը կազմում է 22990 մ<sup>3</sup>: Շահագործման 1-ին տարում առաջացող մակաբացման ապարների, այդ թվում նաև հողաբուսական շերտի ապարների ծավալը կազմելու է 5120 մ<sup>3</sup>: Նշված ապարները նախատեսվում է պահեստավորել բացահանքի եզրագծում՝ ներքին լցակույտերում, առանձին-առանձին: Հողաբուսական շերտը պահպանվելու է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Շահագործման 2-րդ տարուց նախատեսվում է արտադրական թափոնների վերամշակմանը զուգահեռ, իրականացնել նաև մակաբացման ապարների վերամշակում՝ դրանց հետագա սպառման նպատակով: Վերամշակված մակաբացման ապարների կուտակումը կատարվելու է արտադրական հրապարակում: Նման միջոցառման արդյունքում զգալիորեն նվազելու է ներքին լցակույտերում պահեստավորվող մակաբացման ապարների ծավալը: Շահագործման 11-րդ տարուց սկսած, արդյունահանման աշխատանքներին զուգահեռ, երբ բացահանքի 1555 մ հանքաստիճանում առաջանան մշակված ազատ տարածքներ, լցակույտային ապարներն, այդ թվում՝ հողաբուսական շերտի ապարները, սկսելու են պահեստավորվել բացահանքի մշակված տարածքներում: Դեպի բացահանքի մշակված տարածքներ են տեղափոխվելու նաև առաջին տարվա ընթացքում ներքին լցակույտում կուտակված մակաբացման ապարները, ներառյալ հողաբուսական շերտը: Բացահանքի մշակված տարածքներում լցակույտային ապարները տեղադրվելու են հետևյալ կերպ՝ բուլդոզերի օգնությամբ սկզբում փռվելու են մակաբացման ապարները, իսկ դրանց վրա՝ հողաբուսական շերտի ապարները:

Վերջնական ռեկուլտիվացիոն աշխատանքները կկատարվեն արդյունահանման աշխատանքների ավարտին: Ռեկուլտիվացիոն տարածքի մակերեսը կազմում է 7,72 հա:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո նախատեսվում է կենսաբանական ռեկուլտիվացիա՝ բուսական շերտ ստեղծելու և հողի էրոզիայից խուսափելու նպատակով:

«Ռիչեստ գարդեն» և «Գ.Վ.Հ. մայնինգ» ՍՊԸ-ի միջև կնքվել է «Ծառայությունների վճարովի մատուցման» պայմանագիր, որի համաձայն՝ «Ռիչեստ գարդեն» ընկերությունը պարտավորվում է «Գ.Վ.Հ. մայնինգ» ՍՊԸ-ի պատվերով հանքավայրի տեղամասի հարավ, հարավ-արևելյան հատվածում իրականացնել երկշերտ կամ եռաշերտ ծառատունկ՝ 300 հատ «կանադական բարդի» տեսակի ծառերով:

Լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացման համար անհրաժեշտ ծախսերը կազմում են 4569800 (չորս միլիոն հինգ հարյուր վաթսուհինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ: Գումարը հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1733-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով:

Աշխատանքներն իրականացնելիս բնապահպանության օգտագործվելու է ջուր, որը տարածք է բերվելու պայմանագրային հիմունքներով տեխնիկական ջուրը՝ ջրցանվազող ավտոմեքենայով, իսկ խմելու ջրը՝ ավտոգրասերով: Տարածքում առաջացող կենցաղային կեղտաջրերը կուտակվելու են բնորոշ ապակառուցված անջրթափանց զուգարանում,



որտեղից հեռացվելու են պայմանագրային հիմունքներով՝ մասնագիտացված կազմակերպության կողմից:

**Պատճառաբանական մաս.** Փորձաքննության գործընթացում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ազդակիր համայնքում (Կամարիս բնակավայր) անցկացվել է հանրային լսում: Հանրային լսման մասնակիցները հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը, պայմանով, որ ֆինանսական աջակցություն կցուցաբերվի համայնքին և աշխատանքներին կներգրավվեն ազդակիր բնակավայրի բնակիչները:

Նախաձեռնողը հավաստիացրել է, որ բացահանքում աշխատելու համար ներգրավվելու են համայնքի բնակիչները, բացվելու են աշխատատեղեր: Ընկերությունն իր պատրաստակամությունն է հայտնել պարբերաբար հանդիպել համայնքի ղեկավարների հետ, քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե, ինչպես նաև համայնքում իրականացվող աշխատանքներին օժանդակելու նպատակով տրամադրել տեխնիկական միջոցներ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/բացառման նպատակով նախատեսվել են մի շարք բնապահպանական միջոցառումներ.

➤ փոշեգոյացումը բացառելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով ճանապարհների, լցակույտերի, ապարների, աշխատանքային հրապարակների և այլնի ինտենսիվ ջրցան տարվա դրական ջերմաստիճանի դեպքում օրական 3 անգամ,

➤ կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարաների մեջ և տեղափոխում մոտակա աղբավայր՝ համապատասխան ծառայությունների հետ կնքված պայմանագրի համաձայն,

➤ շահագործվող տեխնիկայից արտանետումները նվազեցնելու նպատակով ֆիլտրերի և կատալիտիկ չեզոքացուցիչների տեղադրում,

➤ ջրային ռեսուրսների պահպանության նպատակով մակերևութային հոսքաջրերի բացառում, կեղտաջրերի հավաքում և հեռացում,

➤ շահագործվող տեխնիկայի շարժիչների կարգավորում և մեքենաների շարժիչների կահավորում հատուկ ձայնամեկուսիչ պատյաններով՝ աղմուկի մակարդակը և կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով,

➤ հողային ռեսուրսների պահպանության նպատակով տեխնիկական միջոցների սպասարկումն իրականացվելու է հանքավայրի սահմաններից դուրս՝ սպասարկման մասնագիտացված կետերում,

➤ խախտված տարածքների լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա՝ աշխատանքների ավարտից հետո,

➤ աշխատանքների իրականացման ընթացքում նախաձեռնվելու են միջոցառումներ՝ ուղղված բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների պահպանությանը:

Տեղամասի շահագործման ընթացքում «Գ.Վ.Հ. մայնինգ» ՍՊԸ-ն նախատեսում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի երկօքսիդ, մուր, ծծմբային անիդրիդ, փոշի) պարբերական չափումներ՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում



2. աղմուկի և թրթռումների մակարդակի պարբերական չափումներ,  
3. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի, մասնավորապես՝ չեզոքացուցիչ սարքավորումների վիճակի պարբերական մշտադիտարկումներ,

4. հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ նվազագույնը տարին մեկ անգամ,

5. կենսաբազմազանության մշտադիտարկում՝ նվազագույնը տարին մեկ անգամ, հետագա պարբերականությունը կսահմանվի հիմնվելով հայցվող տարածքում բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների հայտնաբերումից:

Մշտադիտարկումների համար ընկերությունը նախատեսել է հատկացնել տարեկան մոտ 300000 ՀՀ դրամ:

Հանքի փակման աշխատանքների ընթացքում և փակումից հետո ևս նախատեսվում է իրականացնել մշտադիտարկումներ՝ 5 տարի ժամկետով: Մշտադիտարկումների իրականացման ծրագիրը շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ ենթակա է վերանայման՝ հանքի փակման վերջնական ծրագրին համապատասխան:

Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Եզրակացությունը կազմելիս հաշվի են առնվել պետական կառավարման մարմիններից՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացված կարծիքները:

Նախատեսվող գործունեության ընթացքում բոլոր աշխատանքները նախատեսված են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

### **Փորձաքննական պահանջներ**

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է՝

1. առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով՝ փոշու և վնասակար արտանետումների տարածումը կանխարգելելու նպատակով, անբարենպաստ օդերևութաբանական պայմանների առաջացման դեպքում ապահովել լրացուցիչ կանխարգելիչ միջոցառումների իրականացում,

2. բացառել Գետառ գետի աղտոտումն ու աղբոտումը,

3. բուսական աշխարհի օբյեկտների պահպանության նպատակով առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով,

4. իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային ծածկույթ, օդի որակ, աղմուկ, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) մշտադիտարկումներ՝ Կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 22-ի N 191-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան:



5. թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել «Թափոնների մասին» օրենքի պահանջներին համապատասխան,

6. արդյունահանումն իրականացնել առանց պայթեցման աշխատանքների,

7. աշխատանքների ավարտից հետո իրականացնել լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

8. ապահովել միջհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների անցանելիությունը և բացառել որևէ բացասական ազդեցություն,

9. ապահովել հաշվետվությունում ներկայացված բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկումների ծրագրում ամրագրված բոլոր միջոցառումների իրականացումը:

## ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ ԱԱՍ

«Գ.Վ.Հ. մայնինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Կոտայքի մարզի Գյամրեզի անդեզիտաբազալտների հանքավայրում արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Քրիստինե Հարությունյան